# Ինտեգրում e-cadasatre.am առցանց հարթակի և CLIENT-TREASURY վճարումների էլեկտրոնային համակարգի միջև

Տեղեկացնում ենք, որ իրականացվել է Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների հարթակի ինտեգրում Ֆինանսների նախարարության CLIENT-TREASURY վճարումների էլեկտրոնային համակարգին:

էլեկտրոնային ծառայությունների հարթակի դիմումի մուտքագրման «Վճարում» փուլում ստեղծվել է «CLIENT-TREASURY վճարումների էլեկտրոնային համակարգ» բաժինը (նկ.1), որտեղ պետք է մուտքագրել գանձապետական հաշիվներին կատարված վճարման/պետտուրքի անդորրագրի համարը, վճարված գումարի արժեքը և սեղմել «Որոնել»: Եթե անդորրագիրը վավեր է համակարգի կողմից կներկայացվի Ձեր անդորրագրի էլեկտրոնային տարբերակը, որը պետք է «Կցել» դիմումին (նկ.2) և «Հաստատել» (նկ.3):




նկ.1




նկ.2




նկ.3

Արդեն իսկ օգտագործված անդորրագրի տվյալներ մուտքագրելու դեպքում կստանաք հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ՝ «Վճարման անդորրագիրն արդեն իսկ օգտագործվել է» (նկ.4):




նկ. 4

Ծառայության համար պահանջվող գումարից պակաս տվյալ մուտքագրելու դեպքում համակարգը թույլ չի տա անդորրագիրը կցել դիմումին (նկ.5), իսկ ավելի մեծ գումար պարունակող անդորրագրի դեպքում կստանաք հաղորդագրություն տվյալների անհամապատասխանության վերաբերյալ՝ անդորրագիրը կցելու հնարավորությամբ (նկ.6):




նկ.5


Վճարման անդորրագիր
******************************
ԱՆԴՈՐՐԱԳԻՐ
Վճարմ. հանձնարարական 231116090378000
Բանկ ՀՀ ֆինանսների նախարարություն
«CLIENT-TREASURY» համակարգ
Հաստատման ամսաթիվ 2023-11-16
******************************
Վճարման նպատակ՝
ծառ. վճար/ք. Չարենցավան[redacted]
Վճարման ամսաթիվ՝ 2023-11-16
Անդորրագրի համար՝ 231116090378000
Գումար՝ 25000 դրամ
Անունը կամ անվանումը՝ [redacted]
Վճարողի հաշիվ՝ 15[redacted]
Ստացողի հաշիվ՝ 900013220018
******************************
Վճարումը թույլատրված է
******************************
Ձեր վճարումն ընդունված է
*** Շնորհակալություն ***
Ուշադրություն: Դուք ընտրել եք «3 օր 1000 դրամ» կատարման ժամկետը, բայց վճարել եք 25000 դրամ
Կցել
Փակել
Վճարված գումար*

նկ.6